

ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԳՈՅԱԿԱՆԻ
ԹՎԻ ԿԱՐԳԻ ՈՐՈՇ ՈՃԱԿԱՆ
ԱՌԱՆՋՆԱԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Խոսքի մասերը իրենց քերականական և ոճական իմաստների շնորհիվ հիմք են հանդիսանում լեզվական ոճերի ծնավորման համար: Այս առումով լեզվի ոճաբանությունը, որոշ տեսանկյունից, ներկայացնում նաև է տվյալ լեզվի առանձին խոսքի մասերով: Ըստ ռուս լեզվաբան Ի. Լ. Գալպերինի լեզվի ոճաբանությունը գիտություն է, որը ոչ միայն ուսումնասիրում է խոսքային արտահայտության էֆեկտը, այլ նաև այն հնարքները, որոնց միջոցով կարելի է հասնել այդ էֆեկտին¹: Յուրաքանչյուր խոսքային գործողություն կամ քայլ իրականացնելիս, մենք օգտվում ենք լեզվի առանձին տարրերից, խոսքի մասերից, որոնց քերականական և տրամաբանական որոշակի դասավորվածության արդյունքում ստանում ենք խոսքային քայլերի մի ամբողջականություն: Նախադասության մեջ յուրաքանչյուր խոսքի մաս կարող է ստանալ որոշակի ոճական երանգ:

Մյուս խոսքի մասերի համեմատությամբ գոյականը ոճական առումով առավել հետաքրքիր է նրանով, որ խոսքում լինելով ամենահաճախ օգտագործվող խոսքի մասը, օրինակ հայերենի բառապաշարի մոտ յոթանասուն տոկոսը², դրանով իսկ նաև ոճական առումով ամենահաճախ օգտագործվող խոսքի մասն է հանդիսանում:

Ոճական առումով բավական ուշագրավ է գոյականի թվի քերականական կարգը: Սակայն դրա էությունը գոյականի մոտ հիմնովին այլ է, քան մնացած բոլոր խոսքի մասերի մոտ: Թվի կարգը այնքան բնորոշ է գոյականին և

¹ И.Р.Гальперин, О понятиях "стиль" и "стилистика", Вопросы языкознания, М., 1973, №2, стр. 15.

² Պ.Ա.Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք, Եր., ԵՊՀ 1990, էջ 223:

այնքան է համապատասխանում խոսքի այս մասի իմաստային էությանը, որ Հ. Գլինցը այն դիտում է որպես գոյականի գլխավոր հատկանիշ, որը հանդիսանում է նրա «ուղղակի կորիզը» և դրանով իսկ տալիս է այս խոսքի մասի բնութագրությունը³: Թվի կարգի ձևավորման յուրահատկությունները ոճական զգալի հնարավորություններ են ստեղծում: Ինչպես հայերենում այնպես էլ գերմաներենում գոյականը ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Հոգնակի թվի արտահայտման համար գերմաներենում կան տարբեր միջոցներ, այդ թվում նաև հայերենին հատուկ վերջածանցների միջոցով՝ հոգնակիի կազմությունը: Գերմաներենը տարբերակում է հոգնակիացման հինգ եղանակ⁴:

Սակայն ի տարբերություն հայերենի, գերմաներենի հոգնակի թվի կազմությունը յուրահատուկ է նրանով, որ անկախ գոյականի սեռից պարտադիր ստանում է die հոգնակիակերտ հոդը:

Գոյականի թիվը կարող է ունենալ հետևյալ ոճական դրսևորումները: Այսպես՝ գոյականը եզակի թվով կարող է գործածվել գերմաներենում հոգնակիի փոխարեն, օրինակ երբ ցույց է տալիս հավաքական իմաստ, որպես տեսակի անուն, երբ նշվում է հետևյալ տեսակին պատկանող բոլոր անհատներին բնորոշ հատկություն: Օրինակ՝ *Der Türke stand vor Wien*, թուրքը կանգնած էր Վիեննայի առաջ: *Թուրքը* այստեղ հանդես է գալիս եզակի թվով, սակայն իրականում իր մեջ պարունակում է հոգնակիի իմաստ և իմաստային ճիշտ թարգմանության դեպքում նախադասությունը հնչում է հետևյալ կերպ: «Թուրքերը կամ թուրք զինվորները կանգնած էին Վիեննայի առաջ»⁵: Գոյականի այս նույն հատկությունը բնորոշ է նաև հայերենին, օրինակ՝ էսպես՝ որը ունևոր էր ու ջահել, շոր ու փալաս, բարձ ու բարխանա շալակները տվին, տարան, բերդն ածեցին, որը հալևոր էր ու աղքատ, օրվան հացի կարոտ՝

³ Glinz H., Die innere Form des Deutschen. Eine neue deutsche Grammatik. 4 Aufl. Bern-München, 1962, S. 153.

⁴ Ս.Ն. Հարությունյան, Գերմաներենի քերականության համառոտ ծեցնարկ, Ե., 1999, էջ 26-27:

⁵ Այս արտահայտությունը գալիս է թուրք-ավստրիական պատերազմի ժամանակներից, երբ թուրքական բանակը փորձում էր գրավել Ավստրիայի մայրաքաղաք Վիեննան, և այստեղ էլ էր կարող միայն մեկ թուրք զինվոր մասնակցել քաղաքի գրավմանը, այլ խոսքը մի ամբողջ թուրքական բանակի կամ թուրք զինվորների մասին է:

ծեծելով, ջարդելով տանից դուրս արին, որ հենց էն սիաթին տունը, տեղը թողան, երըմիշ ըլին, որ գնան,գնան մյուս գեղցոնց հետ խառնվին, որ քոչեն, չունքի դալաբանդլը էր, *Ռուսը* գալիս ա (Խ. Աբովյան, «Վերք Յայաստանի»): Այստեղ *Ռուսը* գոյականը, որը համատեքստում օգտագործվել է եզակի թվով, ունի հավաքական իմաստ և արտահայտում է տեսակի անուն: Հեղինակը *Ռուսը* գոյականը օգտագործել է եզակի թվով, սակայն նկատի է ունեցել այս գոյականի հոգնակի թիվը, քանի որ խոսքը գնում է ռուս զինվորների մասին, որոնք ռուս-թուրքական պատերազմի ժամանակ շարժվում էին Երևանի բերդի ուղղությամբ՝ այն գրավելու նպատակով, իսկ թուրքերն էլ ի պատասխան դրան տեղահան էին անում շրջակայքի հայ բնակչությանը: Պատմական այս շրջանում (19-րդ դար) հայերը ռուսներին համարում էին Յայաստանի և հայերի փրկիչ, որոնք գալիս էին իրենց ազատելու թուրք-պարսկական տիրապետությունից: Խ. Աբովյանը, *Ռուսը* գոյականը գիտակցաբար դնելով եզակի թվով, այդ գոյականը ավելի ընդգծում է դարձնում և դրանով իսկ ավելի ընդլայնում նրա իմաստային դաշտը, որն էլ հավելյալ ոճական երանգավորում է փոխանցում այս գոյականին: Սակայն եթե հեղինակը այս գոյականը օգտագործեր փոքրատառով և դներ հոգնակի թվով, ապա այն համատեքստին որևէ ոճական երանգավորում չէր տա.

... Ծեծելով, ջարդելով տանից դուրս արին, որ հենց էն սիաթին տունը, տեղը թողան, երըմիշ ըլին, որ գնան,գնան մյուս գեղցոնց հետ խառնվին, որ քոչեն, չունքի դալաբանդլը էր, *ռուսները գալիս էին*:

Այս դեպքում *ռուսները* գոյականը այլևս ոչինչով չի տարբերվում տեքստում օգտագործված մյուս գոյականներից:

Քանդվի էսպես տերությունը, հաստատ մնա *Ռսի* թագավորությունը, որ մեր ազգն ու աշխարքը գերությունից ազատեց, իր բարեգութ ծեռքի տակը բերեց ու հոր պես մեզ խնամում, պահպանում ա (Խ. Աբովյան, «Վերք Յայաստանի»):

Այս օրինակում նույնպես սեռական հոլովով դրված *Ռսի* գոյականը հանդես է գալիս հավաքական իմաստով և իր մեջ ունի հոգնակի իմաստ, այն է՝ *ռուսների* թագավորություն: *Ռուս* գոյականը մեծատառով գրելը հատուկ է Խ. Աբովյանի «Վերք Յայաստանի» վեպին, որով Աբովյանը իր առանձնահատուկ հարգանքն է նաև ընդգծում դեպի այդ ժողովուրդը: Այս գրելաձևը տալիս է վերոհիշյալ

գոյականին նաև հավելյալ ռճական արժեք, այն է՝ հարգանք, ակնածանք դեպի ռուս ժողովուրդը: Նույն վեպում Խ. Աբովյանը *թուրքեր* գոյականը օգտագործում է սովորական ընդունված ուղղագրությամբ, և այս դեպքում *թուրքեր* գոյականը համատեքստում այլևս որևէ ռճական երանգավորում չի ստանում: Էս էլ հերիք ա, որ *թուրքի* լեզուն, որ իրանք *թուրքերը* չեն գրում, միմիայն խոսում են, ու մեզանից որքան բռի են ու կոպիտ, բայց էլի էնքան ա նրանց լեզվի համը ընկել մեր ազգի բերանը, որ խաղ, հեքաթ, առակ *թուրքերեն* են ասում, իրենց լեզուն թողում. պատճա՞ռ. *թունքի* սովորություն ա՝ ընկել: (Խ. Աբովյան, «Վերք Հայաստանի»):

Եզակին հոգնակիի փոխարեն կարող է հանդես գալ բաշխման իմաստի դեպքում, երբ տվյալ ամեն մի անդամի վերագրվում է միևնույն առարկան: Օրինակ՝ *Heben Sie die rechte Hand und atmen Sie tief ein.* Խոսքի մեջ բարեհամբյուր չի հնչի, եթե եզակիի փոխարեն օգտագործենք հոգնակի թիվ, օրինակ՝ *Heben Sie die rechten Hände und atmen Sie tief ein.* Բարձրացրեք աջ ձեռքերը և խորը շնչեք: Կամ մեկ այլ օրինակ՝ Տեսնեմ այդ ով՞ այս *բաժակը* չի պարպելու , Տեսնեմ այդ ով՞ այս *բաժակից* չի հարբելու... Այս *բաժակն* էլ մեր *սրտից* վեր բարձրացնենք... Այս *թատով* էլ մեր կենացը եկեք խմենք (Պ. Սևակ):

Պարույր Սևակը իր «Հրավիրում, ուրախանում եմ» բանաստեղծության վերը նշված քառյակում *թաս* գոյականը դնում է եզակի թվով, սակայն ի նկատի ունի տվյալ գոյականի հոգնակի թիվը, քանզի իր խոսքով դիմում է հավաքվածներին, որոնցից յուրաքանչյուրը իր հերթին ունի մեկական թաս և յուրաքանչյուրը խմելու է հենց այն թասից, որ ինքը ունի, և ոչ թե բոլոր հավաքվածները միասին տվյալ ասույթը արտասանողի թասից , այսինքն խոսքը գնում է միանգամից մի քանի թասերի մասին, և այս դեպքում Պ. Սևակը տեսականորեն կարող էր *թաս* գոյականը նաև հոգնակի թվով օգտագործել: Սակայն երբ այս քառատողը ավելի խորությամբ վերլուծենք, ապա կարող ենք նկատել, որ Պ.Սևակը օգտագործելով *թաս* գոյականը եզակի թվով թեև առաջին հայացիքից ի նկատի ունի միանգամից բոլոր ներկաներին իրենց թասերով հանդերձ, սակայն իրականում նա իր խոսքով դիմում է հավաքվածները

յուրաքանչյուրին անհատապես, որոնցից ամեն մեկն ունի միայն մեկ թաս և խմելու է այդ մեկ թասից, այսինքն Պ.Սևակը ի սկզբանե ճիշտ քերականական ձևով է օգտագործում *թաս* գոյականը, սակայն այն իր մեջ պարունակելով նաև հավաքական իմաստ դրանով իսկ ստեղծում է ոճական երանգ: Նույն քառյակի առաջին, երկրորդ և երրորդ տողերում եզակի թվով դրված *բաժակ* գոյականը նույնպես իմաստային տեսանկյունից արտահայտում է հոգնակիություն և դրանով իսկ ձեռք բերում ոճական արժեք: Հեղինակը, բաժակ գոյականը դնելով եզակի թվով, նկատ ունի տվյալ գոյականի հոգնակի թիվը, քանի որ խոսքը գնում է մի խումբ մարդկանց մասին, որոնցից յուրաքանչյուրը ունի մեկական բաժակ, այսինքն բաժակների թիվը մեկից ավելին է: Սա առավել ցայտուն է երևում երրորդ տողից, որտեղ *բարձրացնենք* բայից և *մեր* ստացական դերանունից արդեն պարզ է դառնում, որ խոսքը գնում է մեկից ավելի մարդկանց մասին: Երրորդ տողում եզակի թվով դրված *սիրտ* գոյականը նույնպես իր մեջ պարունակում է հոգնակի իմաստ, քանի որ հեղինակը նորից կոչ է անում բոլոր հավաքվածներին, բաժակը բարձրացնել սրտից վեր, որն էլ համապատասխանաբար նշանակում է, որ խնջույքի ներկաներից յուրաքանչյուրը իր սրտից վեր պետք է բարձրացնի բաժակը: *Սիրտ* գոյականի հոգնակիության իմաստը առավել ընդգծվում է *մեր* ստացական դերանվան միջոցով:

Կամ *Mit diesem Glass wollen wir trinken...* «այս բաժակով եկեք խմենք...» մեզ քաջ հայտնի բաժակաճառերի ժամանակ շատ հաճախ օգտագործվող արտահայտությունում առաջ է գալիս շղթայական մի կապ, այն է՝

եզակի - հոգնակի - եզակի

Խոսակիցը, արտասանելով հետևյալ ասույթը, թեև բաժակ գոյականը դնում է եզակի թվով, սակայն այն իր մեջ պարունակում է հոգնակիի իմաստ, քանի որ խոսակիցը կրկին այս ասույթով իր խոսքը ուղղում է մի խումբ մարդկանց, որոնցից յուրաքանչյուրը խմելու է իր մոտ եղած բաժակից, այսինքն խոսքը գնում է ոչ թե մեկ բաժակի, այլ մի քանի բաժակների մասին: Սակայն ինչպես վերը բերված օրինակում այնպես էլ այստեղ խոսակիցը իր ասույթը ուղղում է հավաքվածներից յուրաքանչյուրին անհատապես և այստեղ առաջ է գալիս

եզակի - հոգնակի - եզակի

շղթայական կապը, որտեղ եզակի թվով դրված գոյականը իմաստային տեսանկյունից իր մեջ պարունակում է հոգնակիության իմաստ՝ արտահայտված հավաքականության միջոցով, սակայն դրված է եզակի թվով, քանզի նույն իմաստային տեսանկյունից վերլուծելու ժամանակ պարզ է դառնում, որ խոսքը ուղղվում է անհատապես ամեն մեկին՝ ընդհանուրից առանձին վերցրած: Այն ասույթը ավելի հանգամանալից վերլուծելու դեպքում համոզվում ենք, որ այն թեև իմաստաբանական և քերականական տեսանկյուններից միանգամայն ճիշտ է օգտագործվել, սակայն դրանով իսկ ձեռք է բերել նաև ոճաբանական երանգավորում: Հիշյալ օրինակներից կարելի է եզրակացնել, որ այստեղ խոսքը գնում է լեզվում մի այնպիսի ոճական երևույթի մասին, երբ եզակի թվով դրված գոյականը միաժամանակ արտահայտում է և՛ հոգնակիի, և՛ եզակիի իմաստ: Սակայն այս օրինակներից կարելի է նաև հետևություն անել, որ եզակին հոգնակիի փոխարեն կարող է հանդես գալ բաշխման իմաստի դեպքում և արտահայտել եզակի - հոգնակի - եզակի շղթայական կապը, երբ տվյալ ամեն մի անդամի վերագրվում է միևնույն առարկան և խոսքը կառուցվում է կոչի, դիմումի, առաջարկի կամ հրամանի ձևով:

Ի տարբերություն հայերենի գերմաներենում միայն եզակի թվով են օգտագործվում վերացական հասկացություն և բնական երևույթներ ցույց տվող գոյականները: Օրինակ՝ *Freiheit, Recht, Liebe, Kälte, Regen*: Վերացական գոյականի եզակի թիվը հոգնակիի փոխարինման դեպքում կարող է առաջացնել իմաստային փոփոխություններ, օրինակ՝ *"Der Staat muß das Recht schützen aber auch die Rechte seiner Bürger"*⁶ նախադասությունը հայերենով թարգմանվում է հետևյալ կերպ. «Պետությունը պետք է պաշտպանի օրենքը, բայց նաև իր քաղաքացիների իրավունքները»: Այստեղ *das Recht* գերմաներեն *օրենք* բառը, երբ ստանում է *die* հոգնակիակերտ հոդը և *e* վերջածանցը, թարգմանվում է *իրավունք*, այստեղ՝ իրավունքներ իմաստով:

Հայերենում երևույթների անունների հոգնակին ցույց է տալիս տվյալ երևույթի հաճախակի կրկնություն, իսկ որոշ դեպքերում էլ նաև քանակ: Օրինակ՝ անձրևներ , սառնամանիքներ, շոգեր, քամիներ, սերեր:

⁶ Bernhard Sowinski, Stilistik, "Stiltheorien und Stilanalysen. Stuttgart, 1999, S.108.

Մեզ բոլորիս քաջ հայտնի «եղանակի տեսություն» հաղորդման մեջ հաճախ կարելի է լսել հետևյալ ձևակերպումները, օրինակ՝ համրապետության տարբեր շրջաններում սպասվում են ուժեղ քամիներ, կամ օգոստոս ամսին սպասվում են շոգեր, անձրևներով առատ կլիմի հատկապես ապրիլ ամսվա երկրորդ կեսը, սաստիկ սառնամանիքները և առատ տեղացած ձյունը... և այլն: Այս արտահայտություններում օգտագործված քամիներ, շոգեր, անձրևներ, սառնամանիքներ գոյականները արտահայտում են ոչ թե տվյալ երևույթների քանակը, այլ դրանց հաճախականությունը:

Ե՛վ մանուշակի աչիկները թաց,

Ե՛վ երկինքը օհնջ, հոգու պես բացված,

Ե՛վ *քամիների* համբյուրը տաքուկ,

Ե՛վ արոտների ծփանքը փափուկ,

Ե՛վ ողջ աշխարհը լցվել է, իրոք,

Մի արդար սիրով... (Յր. Յովհաննիսյան «Գարուն»):

Որքան բոցեր, վարդեր վառման,

Խնդություններ անդարծ կորած,

Որքան *սերեր*, որքան գարնան

Քնքշություններ դարձան երազ... (Վ. Տերյան)

Այստեղ *սերեր* գոյականը ցույց է տալիս ոչ թե այդ երևույթի հաճախականությունը, այլ քանակը:

Սակայն գերմաներենում այս գոյականները տրվում են միայն եզակի թվով և հայերենի միևնույն ոճական իմաստը արտահայտում են ժամանակ արտահայտող մակբայների օգնությամբ: Օրինակ՝ *Es gibt oft Regen* կամ *Es regnet oft*. Հաճախ անձրևում է: Առաջին նախադասությունը կազմված է ժամանակի մակբայից և գոյականացված բայից, իսկ երկրորդ նախադասությունը՝ բայ+ժամանակի մակբայից:

Ո՛չ հայերենում, ո՛չ գերմաներենում սովորաբար հոգնակիով չեն օգտագործվում հատուկ անունները: Եթե դրանք օգտագործվում են հոգնակի թվով, ապա ցույց են տալիս որպես կանոն ընտանիքը ամբողջությամբ վերցրած: Օրինակ *Jäger*, Գրիգորենք: Սակայն, կախված համատեքստից,

հատուկ անունները ևս կարող են այս նորմայից շեղվել և ձեռք բերել հավելյալ ռճական երանգավորումներ կամ արժեքներ: Լեզվական միավորներ հանդիսացող խոսքի մասերի ռճական առանձնահատկությունները առավել ցայտուն երևում են, երբ տվյալ խոսքի մասերը դիտվում են որևէ համատեքստում, այլ ոչ համատեքստից դուրս, քանզի երբեմն հենց համատեքստից է կախված, արդյոք տվյալ խոսքի մասը այդ համատեքստում կստանա տվյալ ռճական երանգը թե ոչ: «Լեզվի միավորը,- գրում է Վ.Ի. Կոդուխովը,- հայտնվելով համատեքստում, դառնում է նրա մասը: Որպես համատեքստի տարր, այդ միավորը մյուս համատեքստային միավորների հետ միասին իրականացնում է լեզվական համակարգը և արտահայտում է կոնկրետ իմաստ: Յետևաբար՝ լեզվական միավորը և համատեքստը փոխկապակցված են: Համատեքստում կարող են իրականանալ արդեն գոյություն ունեցող միավորներ՝ իրենց իմաստներով, կարող են առաջանալ նոր միավորներ և նոր իմաստներ»⁷: Խոսքի մասերը առանձին վերցրած իրենցից ներկայացնում են պարզապես առանձին քերականական կարգեր, որոնք իրենց հերթին կարող են շեղվել որոշ ընդհանուր սկզբունքներից և առաջ բերել տարբեր քերականական իմաստներ: Իսկ «քերականական իմաստ ասելով,- նշում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը,- պետք է հասկանալ մի դեպքում քերականական հատկանիշ, մյուս դեպքում՝ քերականական հարաբերության իմաստ: Առաջինը կապված է հարացույցի, երկրորդը՝ շարակարգի հետ. հետևաբար առաջինն առնվում է կոնտեքստից դուրս, երկրորդը՝ կոնտեքստում: Առաջինը ոչ այլ ինչ է, եթե ոչ անփոփոխակ, որ բնորոշվում է էական հատկանշով, երկրորդը կարող է փոխակերպվել ըստ տեքստի ընդհանուր («ռճական») և անմիջական («դիրքային») առանձնահատկությունների. այս դեպքում մենք գործ կունենանք տվյալ անփոփոխակի «ռճական» (ազատ) և «դիրքային» տարբերակների հետ»⁸: Սակայն «կոնտեքստի մեջ հանդես եկող դիրքային տարբերակների արտահայտած իմաստային երանգների (առումների) մեջ էլ, -նշում է Ջահուկյանը,- պետք է տարբերել հիմնական կիրառությունը (հարաբերությունը), որ ամենից ավելի է

⁷ В.И. Кодухов, Контекст как лингвистическое понятие, "Языковые единицы и контекст", Л., 1973, стр.20.

⁸ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 105

բնորոշ արտակոնտեքստային իմաստի համար, միավորի երկրորդական կիրառություններից»⁹: Սա նշանակում է, որ դիրքային տարբերակների հիմնական իմաստային երանգները կամ առումները, ինչպես դրանք անվանում է Ջահուկյանը, մշտապես արտահայտվում են հենց այդ տարբերակներով, իսկ լրացուցիչ երանգներն արդեն պայմանավորված են համատեքստով, և արդյունքում համատեքստում է որոշվում հիմնական և լրացուցիչ իմաստների ծավալային փոխհարաբերությունները: Այդ է պատճառը, որ երբեմն հեղինակները համատեքստում գիտակցաբար օգտագործում են խոսքի մասերը այնպես, որ դրանք արդեն տալիս են տվյալ համատեքստին որոշակի ոճական երանգավորում: Երբեմն էլ համատեքստը ինքը կարող է պատճառ հանդիսանալ, որ տվյալ խոսքի մասը կոնկրետ ոճական երանգավորում ձեռք բերի:

Ստորև բերենք Պ. Սևակի բանաստեղծությունից մի հատված, որտեղ հեղինակի կողմից օգտագործված խոսքի մասերը համատեքստին տալիս են որոշակի ոճական երանգավորում և հակառակը, համատեքստը ինքն էլ ոճական արժեք է փոխանցում հեղինակի կողմից ընտրված հատուկ անուններին:

Արշակները մեր՝

Հայրենի հողին ոտքով շփվելով,

Լոկ հպարտության խոսքերով էին շուրթերը բանում

Եվ ըմբերանում տիրակալներին:

Մուշեղները մեր՝

Օտար գործության ընդդիմանալիս

Նրանց հարեմը գերի առնելով

Ո՛ր ձեռք չտալով և ոչ մի կնոջ՝

Առնականության և վեհանձնության դաս էին տալիս,

Այնպիսի մի դաս,

Որ ոսոխն անգամ անգիր էր անում... (Պ. Սևակ «Մարդը ափի մեջ» էջ 225)

Համատեքստում խոսքը գնում է պատմական երկու հայտնի իրողությունների մասին, մեկը, երբ հայոց Արշակ թագավորը պարսից շահի կողմից կանչվում է Տիգրան՝ պարսկական արքունիք, երկու տեղությունների մեջ

⁹ Նույն տեղում:

հաշտության պայմանագիր կնքելու նպատակով, և հայոց թագավորի հնազանդությունը ու հավատարմությունը փորձելու համար նրան անց է կացնում Հայաստանից բերված հողի վրայով, և Արշակ թագավորը շահի հետ խոսում է հպարտ և ըմբոստ հոգով, իսկ մյուսը վերաբերում է սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին, որը, պատերազմում գերի վերցնելով պարսից շահի ողջ հարեմը, առանց անարգանքի և առանց որևէ կնոջ ձեռք տալու ազատ է արձակում պարսից շահի ողջ հարեմը և հետ ուղարկում Պարսկաստան: Ինչպես արդեն նշել էինք, երբ հատուկ անունները օգտագործվում են հոգնակի թվով, ապա ցույց են տալիս, որպես կանոն, ընտանիքին ամբողջությամբ վերցրած: Սակայն այստեղ, համատեքստից ելնելով, տեղի է ունենում որոշակի շեղում: Համատեքստից կարելի է ենթադրել, որ խոսքը գնում է ոչ թե Արշակների կամ Մուշեղների ընտանիքների մասին, այլ այն բոլոր քաջ հայ թագավորների և զորավարների, որոնք ազնիվ ու հպարտ են եղել և խիզախորեն պայքարել են հայկական թագավորության ախոյանների դեմ, որոնք փորձում էին Հայաստանը իրենց հպատակեցնել: Այսպիսով համատեքստում օգտագործված հատուկ անունները ձեռք են բերում ոճական նոր արժեք, այն է՝ հեղինակի կողմից հատուկ անունները օգտագործվել են կոնկրետ պատմական ժամանակաշրջանի նկարագրության համար՝ խոսքը պատմականորեն ավելի հավաստի դարձնելու նպատակով: Հեղինակը, հատուկ ընտրելով այս անունները, համատեքստի միջոցով դրանց տալիս է մեկ այլ ոճական արժեք ևս, այն է՝ Արշակ և Մուշեղ անունները արտահայտում են հավաքական իմաստ և նկատի ունեն բոլոր խիզախ ու հպարտ հայ թագավորներին ու զորավարներին:

Այսպիսով, գոյականի թվի կարգի օգտագործումը լեզվում, խոսքի մեջ հնարավորություն է տալիս ավելի ընդարձակել տվյալ գոյականի իմաստային դաշտը, նրան հաղորդել որոշակի ոճական երանգներ, որոնք գրավոր կամ բանավոր խոսքում, տեքստում ներդնելու շնորհիվ կարելի է հասնել իմաստային դաշտի էլ ավելի ընդարձակման, քան դա կարող են օրինակ ենթադրել գոյականի եզակի կամ հոգնակի թվերը առանձին վերցրած: Մեր կողմից դիտարկվող գոյականները, գրավոր և բանավոր խոսքում հանդես գալով իրենց հատուկ եզակի կամ հոգնակի թվի քերականական կարգով,

արտահայտում են որոշ, կարելի է ասել, կողավորված համակարգ, որոնք, խոսքում օգտագործվելով որոշակի կոնկրետ համատեքստում, կարող են տվյալ համատեքստից ստանալ կամ այդ համատեքստին հաղորդել որոշակի ոճական երանգներ: Այս ոճական երանգները լսողի կամ ընթերցողի համար պարզ են լինում, երբ ընկալվող սուբյեկտի կողմից պարզ է տեքստում ներդրված կողի ոճական երանգը, որն էլ արտահայտում է կոնկրետ քերականական կարգով դրված գոյականի իմաստը որևէ համատեքստում: Գոյականները թվի կարգի շնորհիվ կարողանում են խոսքին հաղորդել ցանկացած ենթատեքստ, որն էլ խոսքին տալիս է շատ դեպքերում անհրաժեշտ ոճական երանգավորումը: Լեզվում կամ խոսքում գոյականի թվի կարգի կազմության այս հնարավորություններն առավել հաճախ են օգտագործվում կոնկրետ հեղինակների կողմից իրենց ստեղծագործություններում, կամ էլ դրանց թարգմանությունների ժամանակ: